

«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ

Պաշտոնը: Ներքին աուդիտի ղեկավար

Պայմանները: Լրիվ դրույք

Տևողությունը: Երկարաժամկետ

Գտնվելու վայրը: ք. Երևան

Դիմումների ընդունման սկիզբը: 16.01.2018թ.

Դիմումների ընդունման վերջնաժամկետը: 22.01.2018թ.

Աշխատանքի նկարագրությունը: Ներքին աուդիտի ղեկավարի նպատակն է օժանդակել Ընկերությանը իր գործառույթների արդյունավետ իրականացման հարցում մասնավորապես ներդնելով համակարգված մոտեցում, նա նպաստում է Ընկերության ղեկավարման հմտությունների, ներքին հսկողական համակարգի, ռիսկերի կառավարման գործընթացի զարգացմանը և կատարելագործմանը:

Աշխատանքային պարտականությունները:

- Իրականացնել Ընկերության ընթացիկ գործունեության և ռիսկերի արդյունավետ կառավարման նկատմամբ վերահսկողություն,
- Իրականացնել ռիսկի վրա հիմնված աուդիտի պլանավորում տարեկան և երկարաժամկետ աուդիտի պլանների զարգացման միջոցով,
- Ներկայացնել Ընկերության խորհրդի կողմից հաստատված ներքին աուդիտի տարեկան ծրագրով սահմանված ժամկետներում հաշվետվություններ և եզրակացություններ ,
- Իրականացնել վերահսկողություն Ընկերության գործադիր մարմնի կողմից՝ օրենքների, այլ իրավական ակտերի, Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջների պահպանման, Ընկերության Խորհրդի կողմից տրված հանձնարարականների կատարման նկատմամբ,
- Կատարել դիտողություններ եւ առաջարկություններ Տնօրինության կողմից առաջարկվող հարցերի վերաբերյալ սեփական նախաձեռնությամբ,
- Իրականացնել մշտական վերահսկողություն ներքին եւ արտաքին աուդիտի, ինչպես նաեւ ՀՀ կենտրոնական բանկի և խորհրդի կողմից առաջարկված միջոցառումների իրականացման գործընթացին վերաբերյալ ,
- Խորհրդատվական ծառայությունների տրամադրել՝ կապված Ընկերության ղեկավարման, ռիսկերի կառավարման և ներքին հսկողական համակարգի գործընթացների իրականացման հետ:

Պահանջվող որակավորումները և հմտությունները:

- Բարձրագույն մասնագիտական կրթություն ֆինանսների, հաշվապահության, աուդիտի, գործարար կառավարման ոլորտներում
- Առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ
- Ապահովագրության և ֆինանսատնտեսական ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության և նորմատիվ իրական ակտերի գերազանց իմացություն
- Գերազանց IFRS իմացություն
- Գերազանց կառավարման հմտություններ
- Առողջ դատողություն և վերլուծողական մտածելակերպ
- Որոշումներ կայացնելու ունակություն
- Հաղորդակցվելու և բանակցելու գերազանց կարողություն
- Պատասխանատվություն և մանրուքների նկատմամբ ուշադրություն
- Սուղ ժամանակային պայմաններում աշխատելու ունակություն
- Թիմում աշխատելու հմտություն
- Հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուների կատարյալ իմացություն
- Համակարգչային գիտելիքներ՝ MS Office (Excell), Հայկական ծրագրեր կամ նմանատիպ այլ հաշվապահական ծրագրեր
- Կենտրոնական բանկից ստացված ներքին աուդիտի ղեկավարի որակավորման վկայական կամ պատրաստակամություն ձեռք բերել այն մեկ ամսվա ընթացքում (կլինի նախապայման գրանցման համար) կամ F1-F9 մակարդակ ACCA որակավորման կամ Level 2 CFA որակավորման կամ CIA որակավորում

Դիմելու ընթացակարգը: Դիմելու համար անհրաժեշտ է ներկայացնել ինքնակենսագրական (CV) info@eia.am էլ. փոստի հասցեով կամ Ընկերության գրասենյակ՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48/1 , «Սախարով» բիզնես կենտրոն, 3-րդ հարկ: